

# Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ  
WWW.SOURPHAGOP.ORG (22-րդ տարի)

## Այս թիւով.....

Խմբագրական՝ Վերամուտ 43 էջ 2

Սեպտեմբեր ամսուան բացատրական  
սօնացոյց: էջ 3-5

Գիտէի՞ր թէ  
Վարագայ Սուրբ Խաչ  
Վարագավանք  
Խաչվերաց  
Սուրբ Գեորգ Զօրավար  
Նիկիոյ Ժողով  
Նաւակատիք

Դպրութեան ձեռնադրութիւն եւ  
ուրարակրութեան արժանացում

էջ 6-9

Ո՞րն է ճիշդ պատասխանը էջ 10-13

42-րդ տարեշրջանի Ամավերջի  
Հանդէս էջ 14-19

Վերամուտ 2022-23 էջ 20

## Սեպտեմբեր 2022 (Լ տարի թիւ 1)



### Ամսուան Համարը

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան,  
արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ  
այդպիսիներուն է Աստուծոյ  
արքայութիւնը»:

*Աւետարան ըստ Մարկոսի 10.14*

## Կ... ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Խաչքարի Հեղինակ՝  
Ժողովրդական Վարպետ  
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

## Վերամուտ 43

Մեր ժողովուրդի ամենէն կարեւոր հարստութիւնը մեր բարոյական դիմագիծին առողջութիւնն է եւ երբ մեր նոր սերունդը հայ քրիստոնէական դաստիարակութեամբ եւ մեր մայրենի եկեղեցւոյ մաքուր կաթով չի սնանիր, կը նշանակէ թէ արդէն բարոյական այլասերումի վտանգը կը սպառնայ մեզի:

Պատմութիւնը կը վկայէ թէ՛ աշխարհասփիւռ մեր գաղութներուն երկարակեցութիւնը կախեալ է ոչ թէ տուեալ գաղութի նիւթական պայմաններէն, այլ անոր հոգեւոր արժէքներէն ու բարոյական սկզբունքներէն:

1980 Սեպտեմբերի 14-ին ծնունդ առած Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը կը պատրաստուի իր 43-րդ յաջորդական տարեշրջանին:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումին հետեւանքով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին, հիմնականօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Մաշտոցի Արձագանգ»ի 30-ամեակին ընդմէջէն պիտի շարունակենք մեսրոպատառ գրութիւններ ներկայացնել մեր աշակերտներուն, մանաւանդ համացանցին վրայ: Մեր կայքէջը, [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ը իր 22-րդ տարին պիտի ամբողջացնէ:

Այս տարի եւս, օգտագործելով զանազան միջոցներ, պիտի շարունակենք սորվեցնել մեր աշակերտներուն.

- Հայ բարքեր եւ կենցաղ
- Հայկական տօներ ու սովորութիւններ
- Երգեր եւ շարականներ
- Հայերէն Աստուածաշունչ բանալ եւ կարդալ
- Հայ եկեղեցւոյ պատմութիւն
- Ձեռային աշխատանքներ:

Այս բոլորը՝ Հայ Քրիստոնէայ նկարագիր մը կերտելու համար:

Թող Բարձրեալն Աստուծոյ աչքն ու աջը հովանի ու առաջնորդ ըլլան Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին, որպէսզի մեր ժողովուրդի նոր սերունդի զաւակները «պարարտ հողի մէջ աճելով պտուղ տան, մէկի տեղ երեսուն, մէկի տեղ վաթսուն, կամ մէկի տեղ հարիւր»:

«Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը մեր բոլորին հետ ըլլան: Ամէն»:

## Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 3	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Կիր. 4	Բարեկենդան Ս. Խաչի Պահոց
Եշ. 8	Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի յԱննայէ
Շբթ. 10	Նաւակատիք Սուրբ Խաչի
Կիր. 11	Տօն Վերացման Ս. Խաչին (Խաչվերաց )
Բշ. 12	Յիշատակ Մեռելոց
Շբթ. 21	Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան օր
Շբթ. 24	Սուրբ Գեորգ Զօրավար
Կիր. 25	Տօն Վարագայ Սուրբ Խաչի


Պահքի Օրեր: 2.5.6.7.9.14. 16. 19. 21. 23. 28. 30

### Գիտէի ը թէ

1. Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ Թափօր-Անդաստանը:
2. Հայց. Եկեղեցոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրհնել զանազան միրգեր:
3. Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:
4. Հայց. Եկեղեցին ունի Ս. Խաչի 3 տօներ եւս. Գիւտ Խաչի, Վարագայ Խաչ, Երեւման Խաչ:
5. Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի վերամուտը ամէն տարի Խաչվերացին տեղի կ'ունենայ:

**Վարագայ Սուրբ Խաչ** Ամէն տարի Սուրբ Գեորգին յաջորդող Կիրակին, որ միշտ Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին է, Հայաստանեայց Եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարագայ Ս. խաչի տօնը: Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեւման Վարագ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Ըստ աւանդութեան, Ս. Հռիփսիմէն այդ տեղ պահեր է իր վիզի խաչը: Հոն, շուրջ 653 թուականին, երկու ճգնաւորներ, Յովէլ եւ Թողիկ, տեսիլք մը կ'ունենան. հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարագ լեռներ, ուր լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:

**Վարագավանք** Կը գտնուի Վան քաղաքին հարաւարեւելեան կողմը, Վարագ լեռան արեւմտեան լանջին: 653-ին երբ յայտնի կը դառնայ Վարագայ Ս. Խաչի «Նշան»ի տեղը, Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին, կը կառուցէ Ս. Նշան եկեղեցին եւ կը հաստատէ Վարագայ Ս. Խաչի տօնը: 870-ին արաբները կը գրաւեն Վարագավանքը, սակայն շատ չանցած Աշոտ Արծրունի իշխանը կ'ազատագրէ զայն: 1857-ին Վարագավանքի վանահայր կը նշանակուի Խրիմեան Հայրիկը «Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի»: Վանքը 1915-էն ի վեր լքուած է եւ ներկայիս աւերակ վիճակի մէջ կը գտնուի:





**ԽԱՉՎԵՐԱՑ**ը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Ան Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարևորն է, որովհետև նուիրուած է խաչին գերութիւնէն վերադարձին, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է:

610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զօրքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերը կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններուն մէջ էր նաև Երուսաղէմի Զաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այն տեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որ Դ. դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հելինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնէաներու համար:

628 թ. Բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը ՄԺԺ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ Բիզանդացիները յաղթանակ կը տանին:

Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն զայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարձի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդին համար:

Խաչը քրիստոնէաներու համար Աստուծոյ զօրութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս, տալով մեզ յաղթութեան զէնքը ընդդէմ սատանային ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզի համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

## Սուրբ Գեորգ Զօրավար

Խաչվերացէն 13 օրեր ետք եկող շաբաթ օրը Ս. Գեորգ է: Ան նահատակուած է Նիկոմեդիոյ մէջ մօտաւորապէս 303 թուականին:

Հասակ առած է քրիստոնէայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284 - 305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնէաներուն դէմ, Գեորգ զօրավարը կը պատռէ Նիկոմեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը:

Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի, որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գեորգի մասին: Ասոնցմէ ամենաձանօթը այն է որ Գեորգը վիշապ մը սպաննելով կոյս մը ազատած է եւ այդ պատճառով կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:



Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գեորգը (Saint George): Սուրբ Գեորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը եւ եւրոպական ժողովուրդները:

## Նիկիոյ Ժողով

Արիոս Աղեքսանդրացի, իմաստասիրական հմտութեամբ ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու փափաքեցաւ: Այն ժամանակ Յիսուսի անձին վրայ խնդիրներ կային եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակետը թէ Յիսուս Քրիստոս չէ մարդացեալ Որդին Աստուծոյ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառացի իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ գաւառական ժողովներու մէջ, 312-ին եւ 319-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն

պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոսը Նիկոմիդիոյ մէջ տեղի ունեցած ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վէճերը ընդհանրացան եւ եկեղեցոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզելով, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակէսը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր յանձնեցին անոր եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակէս եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարածայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին եւ Արիոսը նզովեցին: Կոստանդիանոս ալ զայն աքսորեց: Նիկիոյ ժողովին մասնակցած հայրապետներու անուանացանկին մէջ կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակէսն է, թէպէտ օրինակէ օրինակ անունը աղաւաղուած է: Յատուկ գործունէութեան կամ բանախօսութեան յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը պայքարողներու անունները կը տեսնուին ժողովի ատենագրութեանց մէջ: Արիստակէս ժողովէն ուղղակի վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովք ժողովոյն (ԽՈՐ. 177): Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով ընդունեց եւ հռչակեց Նիկիոյ կանոնները, «եւ սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու» (ԽՈՐ. 177):

**Մաս տուողը կ'ըսէ. «Մասն եւ բաժին եղիցի Սուրբ Պատարագիս»  
Մաս ստացողը կ'ըսէ. «Բաժին իմ Աստուած Յաւիտեան»**

**Նաւակատիք** (նոր կերտել, նոր շինել) նորաշէն տաճարի, եկեղեցոյ, ամէն նորի բացման, տարեդարձի ու նուիրագործութեան հանդէս: Նաւակատիք է նոր աւարտած եկեղեցոյ առաջին նուիրագործութիւնը, ինչպէս նաեւ՝ նուիրագործութեան տարեդարձը: Հայ եկեղեցին նաւակատիքները սկսած է կատարել կամ յիշատակել մեծահանդէս տօներու նախընթաց օրերուն: Նաւակատիքով պահքի խստութիւնը կը մեղմացուի՝ առանց զայն ամբողջովին վերացնելու, այսինքն՝ մտեղէնը խստիւ արգիլելով՝ կը ներուի ձկնեղէնի ու կաթնեղէնի կիրառութիւնը Պատարագի մատուցումէն ետք:

Այդպէս է նաև Հայ եկեղեցոյ հինգ տաղաւար տօներու նախընթաց օրերուն: Այսինքն՝ Վարդավառի, Աստուածածնի Վերափոխման ու Խաչվերացի նախընթաց շաբաթ օրերուն, առաւօտեան Պատարագէն ետք, իսկ Ս. Ծննդեան ու Ս. Զատիկի ճրագալոյցերուն, երեկոյեան Պատարագէն յետոյ կաթնեղէն ու ձկնեղէն գործածելը նոյնպէս Նաւակատիք կը նշանակէ:

Նաւակատիքը իբրև առանձին տօն կը նշուի Խաչվերացի տօնի նախընթաց շաբաթ օրը, 4-րդ դարու բիզանդական կայսրուհի Հելինէի նախաձեռնութեամբ Երուսաղէմի Սուրբ Յարութեան մեծ տաճարը շինուելէն ետք զայն նուիրագործելու և օծելու տարեդարձի օրը, որ ամբողջ քրիստոնէայ աշխարհի համար կարելոր յիշատակ է:

## Պարության ձեռնադրություն և ուրարակրության արժանացում

Ս. Էջմիածնի տոնին օրը. Կիրակի, 19 Յունիս 2022-ին, առաջնորդ սրբազան հայրը՝ Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոս դպրության ձեռնադրություն կատարեց և ուրարակրության արժանացուց երիտասարդ նուիրեալներ: Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցին հարստացաւ 7 ուրարակիրներով, յանձինս՝ Ստեփան Տեմիրճեանի, Իսաչիկ Սարգիսի, Պարգեւ Մկրեանի և մեր ուսուցիչներ Առէն Պապիկեանի, Միեր Պանքեանի, Սեւակ Պապիկեանի, և Հրակ Պանքեանի :











Photo Mourad

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,  
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան, ----- մի՛  
ըլլաք անոնց, որովհետեւ ----- է Աստուծոյ  
-----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցան  
«Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Դպրոցները».  
ա. 1900  
բ. 1929  
գ. 1979  
դ. 1980:

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ  
Սոնթրէալի Սուրբ Յակոբ  
Կիրակնօրեայ Դպրոցը.  
ա. 1900  
բ. 1929  
գ. 1979  
դ. 1980:

3.- Այս տարի «Մաշտոցի  
Արձագանգ»ի քանի՞ երորդ  
տարեդարձն է:  
ա. 6  
բ. 32  
գ. 17  
դ. 30:

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ  
երկու մասերէ. առաջին մասը  
կը կոչուի «--- Կտակարան» իսկ  
երկրորդը՝ «Նոր -----»:  
Առաջին մասը գրուած է Քրիստոսէ ---  
-- իսկ երկրորդը ----- էտք:

5.- Ի՞նչ կը կոչուի այն տաղաւարը  
որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան  
ընթացքին.  
ա. Խաչվերաց  
բ. Սուրբ Ծնունդ  
գ. Սուրբ Զատիկ  
դ. Սուրբ Աստուածածնի  
Վերափոխում:

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն տօնը  
կը տօնենք Սեպտեմբերին.  
ա. Սուրբ Սարգիս  
բ. Սուրբ Գեորգ  
գ. Սուրբ Թադէոս  
դ. Սուրբ Պետրոս:

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին  
կեդրոնական մասը.  
-----:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ  
մկրտուեցաւ.  
ա. 6  
բ. 32  
գ. 30  
դ. 33:

9.- Ամբողջացո՞ւր Հայց. Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Դպրոցներու  
Մաղթերգին առաջին 4 տողերը.

Կիրակնօրեայ Սուրբ յարկին  
մենք ----- ենք լուսաբաղձ  
Կայծերու պէս -----  
Ցայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՞ւր Հայց. Եկեղեցւոյ  
Կիրակնօրեայ Դպրոցներու  
Մաղթերգին երկրորդ 4 տողերը.

Ուստի քայլենք -----,  
Ո՛վ հարազատ զարմ -----  
----- գընացքով  
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Ջ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

- ա. Սահակ Բ. Խապայեան
- բ. Արամ Ա.
- գ. Գարեգին Ա.
- դ. Գարեգին Բ.:

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13րդ գլուխին երեք հիմնական շնորհներն են Հաւատք, Յոյս եւ Սէր, եւ այս երեքն ամենէն մեծն է...

- ա. հաւատքը
- բ. յոյսը
- գ. սէրը
- դ. Աստուածային հիմնական շնորհները թիւով 4 են:

4.- Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը: Աւագ շաբթուան ո՞ր օրն էր այդ.

- ա. Երկուշաբթի
- բ. Ուրբաթ
- գ. Հինգշաբթի
- դ. Չորեքշաբթի:

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.- Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, օրհնեալ է...

- ա. Քրիստոսի Ծնունդը
- բ. Յայտնութիւնը Քրիստոսի
- գ. Յարութիւնը Քրիստոսի
- դ. Անունը Քրիստոսի:

6.- Պատարագի ընթացքին ո՞վ (որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...».

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները:

7.- Ս. Պատարագի ընթացքին Ողջոյն տուողը կ'ըսէ: «Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ»:

8.- Ս. Պատարագի ընթացքին ողջոյն ստացողը կը պատասխանէ. «----- է ----- Քրիստոսի»:

9.- Հինգ տաղաւարներն են.-Ս. Ծնունդ, Ս. Զատիկ, Այլակերպութիւն, Վերափոխումն Ս. Աստուածածնի եւ

- ....
- ա. Մեռելոց
- բ. Խաչվերաց
- գ. Ծաղկազարդ
- դ. Համբարձում:

10.- Ս. Զատիկէն 40 օրեր ետք կը տօնենք.

- ա. Համբարձում
- բ. Երեւում
- գ. Այլակերպութիւն
- դ. Յայտնութիւն:

## Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Ամբողջացո՛ւր:

1.- ----- կը կոչուի եկեղեցոյ արեւմտեան բաժինը որ տաճարէն բաժնուած է պատով ու դուռով, որուն մէջ կը կենային ապաշխարողները որոնք պատրաստ չէին հաղորդութիւն ստանալու:

2.- 325 թուականի Նիկիոյ ժողովին Հայաստանեայց եկեղեցոյ ներկայացուցիչն էր, ----- ը Գրիգոր Լուսաւորչի որդին:

3.- 325 թուականին գումարուած Նիկիոյ ժողովին մասնակցեցան - - - հայրապետներ (կամ անոնց ներկայացուցիչները):

4.- Առաջին տիեզերական ժողովը տեղի ունեցաւ ----- մէջ, --- թուականին :

5.- Խաչվերացը կը տօնենք Սեպտեմբեր - - ի ամենէն մօտ գուգադիպող Կիրակի օրը:

6.- Հայաստանեայց եկեղեցոյ խաչի տօներն են.

- ա. ---- խաչի
- բ. ----- խաչ
- գ. ----- խաչ
- դ. Խ -----:

7.- Խաչվերացէն 13 օրեր ետք Ս. ----- ին տօնն է, եւ յաջորդ օրը ----- Սուրբ Խաչ է:

8.- Ըսէ՛ մէկ բառով՝ նոր կերտել, նոր շինել

-----

9.- Ամբողջացո՛ւր: Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կ'ունենայ -----:

10.- Ամբողջացո՛ւր. Հայաստանեայց Եկեղեցոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրինել զանազան -----:

11.- Ո՞վ գրած է:  
«Գալով ինձի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:

- ա. Ս. Պօղոս Առաքեալ
- բ. Ս. Պետրոս Առաքեալ
- գ. Ս. Յովհաննէս Առաքեալ
- դ. Ս. Թադէոս Առաքեալ

12.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Կոյս Մարիամի ծննդեան տօնը.

- ա. Սեպտեմբեր 8
- բ. Օգոստոս 8
- գ. Յունուար 8
- դ. Հոկտեմբեր 8:

# 42-րդ Տարեշրջանի Ամավերջի Ջանդխ



22 Մայիս 2022-ին, կեսօրէ ետք ժամ մէկին, տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Առաքելական եկեղեցոյ Կիրակնօրեայ վարժարանի 2021-2022 տարեշրջանի ամառական հանդէսը, Corona-19 ախտի իբր հետեւանք, երկու տարուայ դադարէ մը ետք:



Հայ համայնքի գանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ծնողներ եւ ազգայիններ, հաճոյքը ունեցան հետեւելու խնամքով պատրաստուած գեղեցիկ յայտագրի մը, որ եկաւ իր գործադրութեամբ, փաստելու մէկ կողմէ վարժարանի ուսման բարձր մակարդակը եւ միւս կողմէ հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ ազգային դիմագիծը:



Հայաստանեայց Եկեղեցւոյ

# Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոց  
Հիմնեալ 1980, Մոնթրէալ

[director@sourphagop.org](mailto:director@sourphagop.org) [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)



## 2021-22 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՄՄՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍ

Կիրակի՝ 22 Մայիս 2022, Ժամը 1:30 կ.է. Բառարտաձեան Սրահ

### ՅԱՅՏԱԳԻՐ

Հայր Մեր (յոտնկայս)

Բնաստութիւն Հօր, Յիսուս... (յոտնկայս)

զգործս ձեռաց մերոց... (յոտնկայս)

Մաղթերզ Հայց, Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Աշակերտութիւն

Տեսերիզ Մանկապարտէզի եւ Լսիտակրթարանի  
Տեսերիզ Երկրորդականի եւ CEGEP-ի

Տնօրէնի Խօսք

**Թորոս Պապիկեան**

Բացման Խօսք **Ալիք Արշակեան եւ Յարութ Գուճեան (Երկր. Գ.)**

«Տեր իմ Աստուած, Տեր բարերար...» աղօթք **Մանկապարտէզ**

Յիսուսերզ - Հաստուած (Ժագ Յակոբեան) **Լալի. Ա.**

Մաղմու 23 (ԻԲ) **Լալի. Բ.**

Լուռ Գիշեր

Մփխոքի Հայութիւնը (Յովհաննէս Շիրազ) **Լալի. Գ. եւ Դ.**

Հաւատասմք **Լալի. Ե., Զ. եւ Երկր. Ա.**

Սուրբ Աստուած

Ամէն Հայի

Գիշերն Իջաւ

Իրաչին զինուոր

Այբուբեն

(Լալի. Գ. Դ. Ե. Զ. եւ Երկր.)

(Լալի. Գ. Դ. Ե. Զ. եւ Երկր.)

(Լալի. Գ. Դ. Ե. Զ. եւ Երկր.)

(Մանկ., Լալի. եւ Երկր.)

(Մանկ., Լալի. եւ Երկր.)

Հոգևոր Հովիւի Խօսք

**Տեր Գառնիկ Ա. Ջիւլի Գայրեան**

**Վկայականներու եւ Վկայագրերու Բաշխում**

Լսիտակրթարան

2019-20

2020-21

2021-22

Երկրորդական

2019-20

2021-22

**Աստուականի Խօսք**

Փակման Խօսք եւ Պահպանիչ

ԿԻԼԻԿԻԱ

**Հայր Յակոբ Աղբ. Եսաղուեան**

**Ուսուցիչներ, Աշակերտներ եւ Արեւմտեան**

Սեակ Իսթիպաք

Էննանուէլ Գըլպճեան

Լշան Պեքերեան

Ջաւէն Գուճեան

Մինաս Պաքարեան

Մակի Գուլպեան

Հրակ Պանքեան

Ալեքս Տեմիրճեան

Մարին Իշխչեան

Մարին Իշխչեան





Յայտագիրը, խորքին մէջ բաժնուած էր երկու մասի: Առաջին մասով վարագոյրը բացուեցաւ վարժարանին աւելի քան 60 աշակերտներու խումբին դիմաց, որ իր Տէրունական աղօթքով եւ Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ վարժարաներու մաղթերգով բացումը կատարեց հանդէսին. ապա մանկապարտեզէն մինչեւ երկրորդական դասարանի աշակերտներուն գործադրութեամբ շարունակուեցաւ յայտագիրը, ուր աշակերտները իրենց աղօթքներով, սաղմոսներով, ոտանաւորներով, երգերով եւ վարժարանին երգչախումբին մասնակցութեամբ, ներկաներուն ներկայացին իրենց միամտայ դասաշրջանի ձեռքերած կարողութիւններն ու գիտութիւնը, ստեղծելով հոգեպարար եւ բեմ-հանդիսատես յարաբերական ջերմ մթնոլորտ մը: Ամէն անգամ ծափողջիւններով, անոնք արժանացան ներկաներու անխառն գնահատանգին եւ քաջալերանքին:







Անցնող երեք տարիներու ամենամեծ յաջողութիւնը եղած է երկրորդական բարձրագոյն եւ CEGEP-ի մակարդակով աշակերտներու յատուկ դասարաններու բացումը, ուրկէ վկայեալներ կը շարունակեն մնալ վարժարանէն ներս, որպէս ուսուցիչ: Արդարեւ յայտագրին յաջորդ բաժինը պատրաստուած եւ գործադրուած էր այդ աշակերտներու ջանքերով: Երկու տեսաերիզներով, երկու հարցազրոյցներով եւ պատկերներով, անոնք ներկայացուցին վարժարանին կենդանի առօրեան, որուն ընդմէջէն հանդիսատեսը ծանօթացաւ գործադրուող բազմատեսակ՝ կրօնական, ընկերային, ազգային, գեղարուեստական ծրագիրներուն, մասնակից երեխաներուն, պատանիներուն եւ տեսաւ չափահասներուն գոհունակութիւնն ու երջանկութիւնը: Յատկապէս աչքի կը զարնէր պատանիներուն գիտակից մօտեցումը, հանդէպ հոն սատարուող հոգեւոր եւ ազգային ոգիին: Հարցումի մը պատասխանելով աշակերտուհիներէն մէկը պատասխանեց:



«Կիրակնօրեայ Դպրոցին գործունէութիւնը իմնուած է չորս խարիսխներու վրայ, հաւատք, ընտանիք, հաւատարմութիւն եւ ազգային արժէքներու փոխանցում»:



Վարժարանի տնօրէնը իր խօսքին մէջ յակիրճ կերպով ըրաւ վարժարանին պատմականը, վեր առնելով անոր զարգացման ընթացքը եւ շեշտը դնելով հետապնդած նպատակին՝ ստեղծել միջավայր մը, ուր երեխան, պատանին ճանչնայ իր քրիստոնէայ արմատները եւ զանոնք պահելու անհրաժեշտութիւնը:



Յայտագրի յաջորդ կէտը վկայականներու բաշխումն էր, որ կատարուեցաւ Տէրօր եւ պրն. տնօրէնին ձեռամբ: Նախակրթարանի 6 եւ երկրորդականի 3 աշակերտներ ստացան իրենց համապատասխան վկայականները, որմէ ետք երկրորդականէն աւարտական Սարին Խշիշեան եւ այժմ ուսուցչուհին կարդաց իր աւարտական խօսքը, անդրադառնալով իր չափահաս տարիքին առած, կիրակնօրեայ վարժարան յանախելու առած որոշման պատճառին, մօտէն տեսնելով ինչ տարուող գործունէութեանը եւ անոր հանդէպ իր ունեցած հաւատքին եւ աւարտական ըլլալէ ետք ալ, որպէս ուսուցչուհի շարունակելու համոզման եւ որոշումին: Ան յայտնեց իր մեծ գնահատանքն ու գոհունակութիւնը իր այդ որոշման առթիւ:

Փակման խօսքն ու աղօթքը կատարեց տեր Գառնիկ Գոյունեան, որ ըսաւ թէ Աւետարանը ներշնչման աղբիւր է եւ մարտահրաւէր կու տայ ճանչնալու եւ տեր կենալու մեր ազգային, կրօնական արժէքներուն, աւելցնելով, որ Կիրակնօրեայ վարժարանը մէկ մասնիկն է եկեղեցիին եւ անոր առաքելութեան, ուրկից կը բխի եւ կը հիմնաւորուի անոր կարեւորութիւնն ու դերակատարութիւնը ամէն հայ ընտանիքի մէջ: Տէրհայրը հանդէսը փակուեցաւ Պահպանիչով եւ ներկաներու եւ ուսուցչական կազմի մասնակցութեամբ Կիլիկիա երգեցողութեամբ:

Տնօրէնութիւնը նուէրներով ուրախացուց երեխաները եւ հիւրասիրեց ներկաները, որոնք մեկնեցան գոհունակ եւ խաղաղ սրտով:



# Կիրակի՝ 11 Սեպտեմբեր 2022-ին տեղի պիտի ունենայ մեր

2022-23 Տարեշրջանի (43-րդ)

## Արձանագրութիւնը եւ Վերամուտը՝

(3 - 18 տարեկաններու համար)

### Խտացուած Ծրագիր CÉGEP -ի աշակերտներու համար

Կը խնդրուի դպրոց ներկայանալ ժամը 10:30-էն սկսեալ Ձեր զակին/  
զուակներուն հետ արձանագրութեան համար:

Մեր Գործունէութիւնը, ամէն Կիրակի ժամը 10:30 – 1:00

Հետեւեցէ՛ք մեզի

<http://www.sourphagop.org/>



[Sourphagop.org](http://www.sourphagop.org)



[sh\\_sundayschool](https://www.instagram.com/sh_sundayschool)



[SH SundaySchool](https://www.pinterest.com/SHSundaySchool)



514-513-4224

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան